

## ԱՐԵՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՔ

Ուրբաթ, 8 Յունիսի, 2007

Գլենդելում գործող Միացեալ հայկական ֆոնդի 143-րդ թռիչքը Երեւան է ժամանել Յունիս 2-ին, փոխադրելով աւելի քան 14 միլիոն դոլարի արժողութեան մարդասիրական օգնութիւն: Այս թռիչքով Հայաստանին են տրամադրուել դեղորայք եւ բժշկական պիտոյքներ, որոնք նուիրուել են հայկական ու ամերիկեան մարդասիրական կազմակերպութիւնների կողմից:



CASPS կոչուող Կալիֆորնիայի պետական դպրոցների հայ աշակերտների ուսումնական կեանքին հետեւող Ազգ. առաջնորդարանի յատուկ յանձնախումբը, ընթացիկ ուսումնական ամապերջի առիթով կազմակերպել էր երկու հանդիսութիւն: Առաջինը, որը նուիրուած էր Գլենդելի պետական դպրոցներից շրջանաւարտ յաջողակ աշակերտներին, տեղի ունեցաւ Երեքշաբթի, Մայիսի 29-ի երեկոյեան, ժամը 5:30-ին, Գլենտլի Pacific Community Center-ի սրահում, պետական դպրոցների տնօրէնների եւ շրջանի կրթական մշակների ու պատասխանատուների ներկայութեամբ: CASPS-ի երկրորդ հանդիսութիւնը, որը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, Յունիսի 6-ին, նուիրուած էր Լոս Անջելոսի պետական դպրոցների երկրորդ տեղամասի շրջանաւարտներին:



Ինչպէս հաղորդում է «Ասպարեզ» օրաթերթը, Գլենդելում գործող Foothill Autism Alliance ամերիկեան կազմակերպութիւնը, որը մարդասիրական օգնութիւն է ցուցաբերում Autism մտային հիւանդութեամբ տառապող երեխաներին ու նրանց ծնողներին, հիմնել է ՕՂՕՍ այն է՝ Օթիզմի Հայ Օժանդակ Մարմին, որի նպատակն է Կալիֆորնիայի հայ համայնքին լայն տեղեկութիւններ հաղորդել Autism մտային հիւանդութեան եւ դրա հետեւանքների մասին: Այդ իմաստով ՕՂՕՍ-ը Ապրիլ ամսից ի վեր հայ համայնքի համար կազմակերպել է դասախօսական ու հեռուստատեսային յատուկ միջոցառումներ, որոնց մասնակցում են մասնագէտներ ու կրթադաստիրակչական բնագաւառի փորձագէտներ:



ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը քաջալերել է բոլոր ամերիկահայերին, որպէսզի այսօրուանից իսկ, արձանագրուեն՝ քուէարկութիւնների համար եթէ մինչ այժմ չեն դիմել արձանագրութեան: Յանձնախումբը նաեւ քաջալերել է, որ համակարգիչ գործածողները արձանագրուեն՝ Հայ Դատի Յանձնախմբի կայքէջի ընձեռած հնարաւորութիւնից: Համակարգչով արձանագրուելը ընդամենը տեւում է մի քանի րոպէ, այցելելով [www.anca.org](http://www.anca.org) կայքէջը: Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի վերջերս կատարած հարցախոյզի համաձայն, ամերիկահայութեան 86 տոկոսը արձանագրուել է քուէարկութիւնների համար:

Այս լուրերը տրամադրուում են  
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի  
կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations.ARF@hotmail.com](mailto:PublicRelations.ARF@hotmail.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Սոյն լուրերը տրամադրուելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:

Լուրերը կարելի է վերատպել:

Լուրերի մանրամասնութիւնների համար կարդացէք «Ասպարեզ» օրաթերթը: